սորա նման խօսքեր ասում, ու յուսով հանդերձանքին սպասում.... խեղճ, միամիտ հայեր, որքան որ արարիք բարի, միշտ ձեր ոտները դիպաւ քարի.... վա՜յ, ջաղացը ջուրը տարել է, ես կանդնել եմ չախչախկին եմ ման դալիս»

Չը մոռանանք ասելու, որ Իդդիրցի պ. Ազամեան Գանձակեցոյը, որը ինչպէս իր հոդաբարձական պաշտօնավարութեան մէջ, նոյնպէս և երբեմն ազգօգուտ գործերում միշտ բարեխիղճ հանդիսանալով, պանց չառաւ Վանի սովատանջ հայերի համար ստորագրութիւն բացելու և որպէս զի իր խօսքը իր գործին համապատասխան լինի, նախ ինքը իր անձնականից յիսուն բուրլի նուիրեց Վանի սովելոց, մի հարիւր բուրլի ևս Իդդիրցու ազգատներին ման հանելով. Դեռ չիշեալ պարոնը չդադարեցնում է իր ստորագրութիւնը. Պ. Գանձակեցի զգայուն սիրոյը և ճարտար լեզուն հաւատացնում է մեզ, որ նա իր սկսած այդ բարեպաշտակ գործը յայտնի կեղծով յառաջ կը տանի։ Թող մեր գաւառի տէրտէրները և հարուստ ուներ անձինք օրինակ վերառնեն պ. Ազամեան Գանձակեցից։ Եթէ իւրաքանչիւր տէրտէր մի մի թաման հասոյթ, և եթէ իւրաքանչիւր ունեոր մարդ մի մի չիշ արաղի գին Ջորջք անեն, այն ժամանակ մեր հեռաւոր սովատանջ հայ եղբայրներին նեղաս կարասն անգութ սովի հարուածից, իրանցն էլ ոչինչ չը պակասելով, մի անուն բարի կը թողնեն և մի եղբայրասիրութեան պարագ կատարած կը լինեն։

Նամակս ուզում էի կնքեմ, լսեցի որ Իդդիրի մեծարգուստ պ. Թովմասեանց Ստեփանոս քահանան մեռադրվում է և մի հազար բուրլի փող ուղարկել ձեզ Վանի սովելոց համար, եթէ սոյդ լինի այդ, նորա այդպիսի առատաձեռն նուիրատուութիւնը կարող է մեր միւս հոգևորականներին բարի օրինակ տալ։

Իդդիրցի

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, մարտի 22

Արդէն շատ ժամանակ էր որ մեզ դիր էի կարդալով ձեր պատուական լրագրի 19-րդ համարը, Վանի սովալուկների վերաբերեալ հանգանակութիւն սկսել իմ չքաւոր ասնաֆի մէջ, (գրագիրների, ճոճների համար) բայց սպասում էի մեր քաղաքի աղաներից առաջ չերթալ և նրանցից նուիրատուութեան եղանակն սովորել, բայց ի զուր սպասեցինք. մինչև հիմա քաղացած սրտերէն ոչինչ չմնացանք. ճարահատեալ չարունակեցինք մեր չքաւոր ասնաֆի մէջ ամենքի լուսոյն ընդունել ոչ թէ ունեցողէն, այլ չունեցողէն ևս, որոյ գումարն եղաւ 79 բուրլի 50 կ.։ Խնդրենք ուր հարկն է հասցնէք և նուիրատուների անունները տպէք ձեր պատուական լրագրի մէջ Ի զիտութիւն ասնաֆի։

Սարգիս Ղավալեանց 3 բ., Ալէքսի Ձէրմէյ 3 բ., (վրացի) Ղազար Աբուբիւնեանց 3 բ., Գիգօ Դիվիով 2 բ. (վրացի), Կարապետ Բարսեղեանց 2 բ., Գրիգոր Բայենդուրեանց 5 բ., Գիորգի Բէգզով 1 բ. (վրացի), Գաբրիէլ Ղազիկեանց 2 բ., Իսվանէ Աբուլվի 1 բ. (վրացի), Զաքար Շահրազեանց 2 բ., Օսէֆ Խօջեանց 3 բ., Ալէքսանդր Տրիգոնով 3 բ., Յոյն Գէորգ Թարխանեանց 1 բ., Գիգօսի Ջուլեանց 1 բ., Սարգիս Սարգիսեանց 3 բ., Ակոբ Գրիգորեանց 2 բ., Օհանէս Ակնազարեանց 50 կ., Վասիլ Թաչատուրեանց 50 կ., Աբուբիւն Մուսէսեանց 50 կ., Ակոբ Ամիրջանեանց 50 կ., Սիկոյ Մարքարեանց 50 կ., Նիկոլ Մուրալով 2 բ. (վրացի), Սօսի Ենգիբարեանց 1 բ., Անդրէ Սահակեանց 1 բ., Մկրտիչ Հախնազարեանց 50 կ., Աղուէն Մխիթարեանց 1 բ., Զաքար Զօրանեանց 1 բ., Միխայէլ Սօլօմանով 1 բ. (վրացի), Ամիրաղուբան օղլի 30 կ. (պարսիկ), Եպգոր Բաքրաձէ 30 կ., (վրացի) Աբուէմ Զուլեանց 20 կ., Գիգոյ Թէմուրազով 50 կ. (վրացի), Կոմս Ներգելով 1 բ. (վրացի), Միխէիլ Շերդելով 2 բ. (վրացի), Սօսիկս Թուրախեանց 40 կ., Հայրապետ Գրիգորեանց 1 բ., Յակոբ Յուսէփեանց 40 կ., Թաթէոս Զլիձէ 40 կ., (վրացի) Եսայի Մնչանձէ 40 կ. (վրացի), Օհանէս Գրիգորեանց 40 կ., Շաքար Սարգիսանց 40 կ., Աբուէմ Սարգսեանց 40 կ., Դէորք Ենգիբարեանց 50 կ., Սարգիս Բաղդասարեանց 50 կ., Ալէքսի Բաղրամեանց 20 կ., Ղօրմազ Սպանդեանց 1 բ., Բաժդէն Բեգիզով 20 կ. (վրացի), Եպգոր Օհանէսեան 50 կ., Նոնօ Փիրումեանց 50 կ., Դանիէլ Դանիէլեանց 20 կ., Եսայի Աբրամեանց 40 կ., Սերգօ Զլուսեանց 40 կ., Օհանէս Տէրտէրեանց 20 կ., Գրիգոր Զուլեանց 1 բ., Միխայ Դիվիով 1 բ. (վրացի), Սիմէոն Զիրաքով 1 բ. (վրացի), Կակուլի Դիգաուրի 1 բ. (վրացի), Մեսրոպ Աբուբիւնեանց 20 կ., Սօսի Աբուբիւնեանց 20 կ., Իսէպի Միրզայեանց 50 կ., Եպգոր Բաղդասարեանց 50 կ., Սիմէոն Սահակեանց 50 կ., Միսրոբ Զելաձէ 50 կ. (վրացի), Սարգիս Օհանէսեանց 20 կ., Բաղրի Աղրուլ օղլի 30 կ. (պարսիկ), Գաւրիթ Թիրերաձէ 20 կ. (վրացի), Գիգոյ Սարգսեանց 30 կ., Եպգոր Զանգարով 20 կ. (վրացի), Միխայ Ներսէսեանց 20 կ., Կոյոյ Բոնբիսով 20 կ. (վրացի), Սոլոմոն Պօչիկեանց 1 բ., Բասսոմ Խեչատուրեանց 50 կ., Աւետիք Խաչատուրեանց 50 կ., Օհանէս Խաչատուրեանց 50 կ., Գաբօ Բարսեղեանց 20 կ., Արտէմ Աբուբիւնեանց 20 կ., Սարգիս Օսկիփեանց 20 կ., Աթօ Մատինեանց 10 կ., Նիկիպոս Զարիձէ 20 կ. (վրացի), Ամիրան Սիմենով 50 կ. (վրացի), Բասսամ Աբուբիւնեանց 20 կ., Սաքուլ Գիվիմեանց 50 կ., Արտէմ Բաղդասեանց 50 կ., Գիգոյ Մարտիրոսեանց 50 կ., Աէֆքսի Ներսէսեանց 50 կ., Գէորգ Թուրաքանց 30 կ., Ղօրխազ Լիփսիանց 30 կ., Դէորգ Մկրտումեանց 30 կ., Դէորգ Կիրտզեանց 50 կ., Միխայ Փոզիկեանց 50 կ., Վանս Ճումպուլաձէ 20 կ. (վրացի), Ալի Իրբամ օղլի 30 կ., (պարսիկ) Աբուբիւն Ստեփանեանց 30 կ., Ստեփան Դալուստեանց 50 կ., Սարգիս Ավրիամանցի տիկին 50 կ., Լիմոնայ Ղավանց 1 բ., Օրիորդ Լիզայ Ղավանց 1 բ.։ Ընդամենը 79 բ. 50 կ.։

Ստեփէնա Սարգիս Ղավանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՐԻՐԵՐ

—

Գողֆրուա եղբայրների թիֆլիսի ֆրանսիական ցիրկի վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ յաջորդ մարտի 29-ին լինելու է ցիրկի դիրեկտորի անուն Գողֆրուայի և իր ամուսին տ. Դենիզ Գողֆրուայի բենեֆիսը։ Այդ ներկայացման ժամանակ տրվելու են երկու նշանաւոր և շատ նորութիւններ։ Ցիրկի վարչութիւնը յայտնում է նոյնպէս, որ չուսով հասնելու են Թիֆլիս նոր արտիստներ, ի մէջի այլոց վարչավայի առաջին կըլոուն Մարկա։

—

Թիֆլիսի թատրոնական կոմիսէտի հաչի մասին մեր յաջուանում մենք ասացինք որ պ. Ազամեան ստանում էր Նոր-Նախիջևանում 25 բուրլ ամիս, բայց այժմ լսում ենք որ պ. Ազամեանը բաստանում էր 70 բուրլ ամիս։

—

Մենք ստացանք մի նամակ Ֆրանսիայի Մարսէլ քաղաքից, որի մէջ մեզ խնդրում են յայտնել հետևեալը։ «Իսկական երիտասարդներին, որոնք ցանկանում են դնալ Ֆրանսիա իրանց ուսումը չարունակելու համար, առաջարկվում է Մարսէլ քաղաքում գտնված «L'institution Roussel» անունով դպրոցը։ Այս դպրոցում առանձին ուշադրութիւն են դարձնում կենդանի լեզուների ուսումնասիրութեան վրա։ Պայմանների համար կարելի է դիմել հետեւեալ հասցէով. Marseille, Institution Roussel, Cours Julien, 14։ Դպրոցը նամակ ստանալուն պէս կուղարկի իր ուսման պրոգրամը ցանկացողներին։»

—

Երեքշաբթի օր, ապրիլի 1-ին պ. կոզլով տալու է իր վերջին ներկայացումն Աղեքսանդր թատրոնում, ներկայացման ժամանակ ընծաներ կը բաժանվեն հասարակութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական պարլամենտը դեռ իր նիստերը չէր վերջացրել, մինչև Նրա երկու մեծ կուսակցութիւնները, ազատամիտ և պահպանական, արդէն սկսեցին ընտրողական պատրաստվել։ Յայտնի է, որ լորդ Բիկոնսֆիլդ մի քանի ժամանակ առաջ մի շրջաբերական հրատարակեց, որով նա մեզադրում էր ազատամիտներին, ասելով, որ նոքա բաւականաչափ ազգասէր չեն, որ համակրում են իրանցից ավելի ծայրամիտներին։ Մարկիզ Հարթինգտոն, ազատամիտ կուսակցութեան առաջնորդը, ընտրողներին ուղղված մի ուրիշ շրջաբերական հրատարակեց, որով նա պատասխանեց լորդ Բիկոնսֆիլդին։

Հատուցիզդ չէ մեզադրում այժմեան առաջին մինիստրին Նրանում, որ կառավարական դիրքը իր ձեռքն առնելով, Բիկոնսֆիլդ խառնեց Անգլիային զանազան քաղաքական գործերի մէջ, այլ ասում է, որ պահպանողական մինիստրութիւնը իր մտադրված նպատակներից ոչ մէկին չը հասաւ։ Այդ շրջաբերականից երևում է, որ լորդ Բիկոնսֆիլդ իրաւացի էր, երբ աշխատում էր խանգարել Թիւրքայ պատերազմը, բայց նա չը կարողացաւ իր նպատակին հասնել։ Նա նոյնպէս իրաւացի կերպով աշխատում էր Անգլիային ներքսայում առաջնորդող դիրք տալ, բայց մեզադրում է, որովհետև այդ դիրքը նա փչացրեց գաղտնի դաշնագրութիւններ կապելով։ Մարկիզ Հատինգտոնի կարծիքով ընտրողները պէտք է աշխատեն, որ իշխանութիւնը գարձեալ պահպանողականների ձեռքը չընկնի, որովհետև պահպանողական կառավարութիւնը չը կարողացաւ արգելել Ռուսաստանի ընդարձակվելուն և Թուրքիայի բաժանմանը։ Ազատամիտները խոստանում են երկրին պահպանել կայսերութեան հզորութիւնը, ապահովելով հայրենիքը և պաշտպանելով նրա երկիրները, բայց նոքա չեն հեռանի շփոթող և վրդովմունք զցող քաղաքականութեանը։

Այդ շրջաբերական բովանդակութիւնը իսկապէս հետևանք է պահպանողական կառավարութեան նպատակները շատ զեղցիկ էին, բայց այդ կառավարութիւնը չը կարողացաւ հասնել նրանց, առէք իշխանութիւնը պահպանողականներից, տուէք նրան ազատամիտներին, որոնք կուզին առաջինների սխալները։

Ազատամիտ կուսակցութեան առաջնորդը իր շրջաբերականներով շատ բան է խոստանում, բայց այդ խոստմունքների իրագործելը ոչինչով չէ ապահովեցնում։ Ամենքին յայտնի է, որ Դիզրաելիի կառավարութեան ժամանակ Անգլիան Եւրոպայում առաջնակարգ դիրք չունէր։ Այժմեան առաջին մինիստրը կարողացաւ կառավարութիւնը խլել Դիզրաելիի ձեռքից այն պատճառով, որ մեզադրում էր այս վերջինին, թէ սա աշխատում էր հեռացնել Անգլիային Եւրոպայի միջազգային գործերից։ Ազատամիտները առաջ չէին աշխատում հերքել այս մեզադրանքները։ Նոքա միայն պնդում էին, որ Դիզրաելիի քաղաքականութիւնը երկրին բարօրութիւն պարգևեց։ Մինչև վերջին արևելեան պատերազմի սկսվելը և պատերազմի ժամանակ անգամ ազատամիտները մեզադրում էին պահպանողականների ձգտումները Թիւրքային պաշտպանելու համար։

Գործերի դրութիւնը այժմ փոխվել է։ Բիկոնսֆիլդի մինիստրութիւնը մեզադրվում է ազատամիտներից այս վերջինների նախկին պահանջները կատարելու համար։ Այս փոփոխութիւնից երևում է, որ ազատամիտները բացի մի քանի վիճաբորբութիւններից երկրին ոչինչ չեն կարող խոստանալ, իսկ այդ վիճաբորբութիւնները ընտրողները կարող են ստանալ նոյնպէս պահպանողական կառավարութիւնից։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Ամէրիկից «Голосъ» լրագրին գրում են։

Անցյալ շաբաթը Յունաստանի քաղաքական կեանքին վերաբերեալ նորութիւններով հարուստ չէ։ Պառլամանտների ժողովի նիստերից հետաքրքիր է միայն փետրվարի 12-ի նիստը, որի ժամանակ արտաքին գործերի մինիստրը պէտք է տեղեկութիւններ տար Յունաստանի և Թիւրքիայի մէջ եղած սահմանական բանակցութիւնների մասին։ Որովհետև այդ հարցը շատ նշանաւոր էր, ժողովարը շատ հաւաքվեցաւ։ Ամենքը յոյս ունէին մինիստրից լսել այնպիսի մանրամասնութիւններ, որոնք կարողանային բացատրել, թէ Յունաստանը ինչ կարող է սպասել այդ բանակցութիւններից։ Տարաբաղդաբար ժողովի այդ նիստը սպասածի չափ հետաքրքրական չէր։ Մինիստր Դելիանի, ի նկատ ունենալով բանակցութիւնների շարունակվելը, կարողացաւ միայն այնքան հաղորդել, ինչ որ արդէն լրագրերից յայտնի էր։ Մինիստրի ասածից երևաց, որ այդ բանակցութիւններից Յունաստանը չէ կարող իր համար բարեացակամ վախ սպասել և որ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների միջնորդութիւնն վրա էլ մեծ յոյսեր դնել չէ կարելի։ Նաստերը ենթադրում էին, որ յունական պատգամաւորների ժողովի ընդդիմադրական կուսակցութիւնը, օգուտ քաղելով մինիստրի թոյլ բացատրութիւններից, կը յարձակվի կառավարութեան քաղաքականութեան վրա, մանաւանդ որ ասմանագծի հարցը Յունաստանի մէջ այժմ կենսական հարց է։ Բայց այդ կուսակցութիւնը անտարբեր մնաց, սպասելով, որ կառավարութիւնը ներկայացնէ 1880 թուականի բիւջեները։ Ամենամանրամասն պատգամաւորների մէջը յայտնեց, որ եթէ միջազգային պետութիւնների վրա յուսալ չէ կարելի, Յունաստանը պէտք է ինքը աշխատէ, որ այդ հարցը վճռվի, որովհետև այդ պահանջում են ազգային պատիւը և ինքնապաշտպանութեան գոյացումները։

Յունական լրագիրներից մէկը, յարձակվելով կառավարութեան վրա սահմանական հարցի գրգռելուը ժողովրդին որոշ չը բացատրելու պատճառով, այն միտքն է յայտնում, որ Յունաստանը Անգլիայի օգնութեան վրա յոյս չէ կարող դնել, քանի որ այդ երկիրը պահպանական մինիստրութենից է կառավարվում։

Պառլամաւորների ժողովի անդամներից մէկը առաջարկեց, որ մինիստրի պաշտօն ընդունող պատգամաւորը գրկվի պատգամաւորական իրաւունքից և պաշտօնը թողնելուց յետոյ ընտրողների կողմից նորից քուէարկվի։

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

—

Գերմանական լրագիրների մէջ հետևեալ տեղեկութիւններ կան։

Մարտի 8-ին իշխան Բիսմարկ պարլամենտական մեծ ժամանակ հետևեալ յայտնութիւններ արաւ։ Նա ասաց, որ չէ կարող մեզադրել Ֆրանսիական կառավարութեան վարմունքը Դարմանի գործի վերաբերութեամբ։ Անգլիայում Պալմերստոնի մինիստրութիւնը իսկոյն ընկաւ, երբ Օրսնիի փորձից յետոյ, դատաքննութիւնների մասին պարլամենտին առաջարկութիւն արաւ։ Ֆրանսիական հանրապետութիւնը, իշխանի կարծիքով, ուրիշ վիճակ չէր կարող ընդունել, որովհետև նա վատանդի կենթարկվէր։ Պաստրուրդից եկած լուրերի համեմատ, ռուսաց դեսպանը Փարիզում, իշխան Օրլով, յայտնել է, որ կը մնայ Փարիզում իրրև մասնաւոր մարդ և որ իր վիճակը չի փոխի, բայց այդ չէ նշանակում, որ երկու երկիրների դիպլոմատիական յարաբերութիւնները ընդհատվին։ Քանի որ երկու երկիրների մէջ յանցաւորներին վերադարձնելու դաշնագրութիւն չը կայ, այդպիսի դաշնագրութեան բացակայութեան պատճառով վնասված երկիրը միւսից զանգատվելու իրաւունք չունի։ Այդպիսի հարցերի վրա երկրի ներքին քաղաքականութեան տեսակէտից պէտք է նայել։ Ֆրանսիան այդ դէպքում ի նկատի առաւ իր սեփական ներքին շահերը։ Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի յարաբերութիւնները իշխան Բիսմարկի ամենաբարեկամական անուն անեց։ Աւստրիական զինուորական շրջանները անպայման համակրում են երկու երկիրների մեծ բարեկամութեանը։ Երշերցոգ Պրրեխտ, որի մասին հակառակ լուրեր էին տարածված, ամենից շատ աշխատում է այդ բարեկամութեան ամրանալու համար։ Գերմանիայի բանակցութիւնները Հաւմի հետ, իշխանի կարծիքով, լաւ են գնում և նա յոյս ունի որ Հաւմը դիվանագիտական կանի Գերմանիային և այս վերջինն էլ նոյնը կանի։ Զինուորական նոր օրէնքի մասին իշխանը նոյն մտքերը յայտնեց, ինչ որ Մոլտկէ պարլամենտի մէջ ասաց մեռած։ Երկու տարվայ բիւջեների հարցի մասին իշխանը ասաց, որ նա այնքան լաւ է, որ առաջարկվելուն պէս ընդունվեցաւ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 մարտի։ «Herold» լրագիրը լսել է, որ շուտով կը սկսվի բժիշկ Վէյմարի գործի քննութիւնը։ Բացի մեզ յայտնի մեզադրանքներից նա մեզադրվում է և Նրանում, որ իր կառքով օգնեց փախչել Մեգենցովի սպանողին, յետոյ տուեց բէվոլվէր և թոյն Սոլոմոնին։ Վէյմար մեզադրվում է նոյնպէս, որ նա օգնեց փախչել հիւանդանոցի մէջ գտնված իշխան Կրապոտկինին, որը մեզադրվում էր Նիհիլիստական շարժումներին մասնակցութեան մէջ։

ԲԵՐԼԻՆ, 26 մարտի (7 ապրիլի)։ Իշխան Բիսմարկ հրաժարական տուեց, փոստային դրամական և փոխադրական տոմսակների վրա հարկ դնելու առիթով, միացեալ խորհուրդի մէջ պատահած վէճերի պատճառով։ Կայսր Վիլհելմ չընդունեց հրաժարականը և հրաւիրեց իշխան Բիսմարկին բացատրութեան համար։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ